ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(ԴՈՒԱԼ ուսուցման կազմակերպման վերաբերյալ)

«2» սեպտեմբերի 2024թ.

ք. Հրազդան

Մասնագիտական ուսումնական հաստատություն («ՄՈՒՀ»)՝ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	**Գործընկեր Կազմակերպություն՝ «Էյթի Էյթ» ՍՊԸ**

այսուհետ միասին «**Կողմեր**», առանձին՝ «**Կողմ**»

մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում սոցիալական գործընկերության համընդհանուր համաձայնեցված նպատակների իրականացմանը միտված համագործակցության շրջանակներում, կնքեցին սույն Համագործակցության Պայմանագիրը («**Պայմանագիր**») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագիրը կարգավորում է ԴՈՒԱԼ ուսումնառության կազմակերպման հետ կապված Կողմերի հարաբերությունները:

1.2. Սույն Պայմանագրի շրջանակում Գործընկեր Կազմակերպությունը ապահովում է սույն Պայմանագրի **Հավելված 1-ով** նշված ուսանողների (այսուհետ՝ **«Ուսանող»**) աշխատանքային կիրառական կարողունակությունների ձեռքբերմանը միտված գործնական աշխատանքային ուսուցումը, իսկ ՄՈՒՀ-ը ապահովում է համապատասխան կրթական ծրագրով սահմանված հիմնարար գիտելիքների և կարողությունների ձևավորումը, իրականացնում է ուսումնամեթոդական և համակարգման աշխատանքներ:

1.3. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար Կողմերը հաստատում են գործնական աշխատանքային ուսուցման ծրագիրը (երը) (փոփոխության դեպքում կամ նոր ծրագրերի պարագայում) և Ուսանողների ցանկերը՝ սույն Պայմանագրի նոր հավելված (հավելվածներ) կնքելու միջոցով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2.1. ՄՈՒՀ-ը իրավունք ունի՝

2.1.1. Գործընկեր Կազմակերպության հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով, սակայն ոչ պակաս, քան կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ այցելել Գործընկեր կազմակերպություն՝ վերահսկելու գործնական աշխատանքային ուսուցման ընթացքը և դրա համապատասխանությունը ուսումնառության վերջնարդյունքներին,

2.1.2. Գործընկեր Կազմակերպությանը ներկայացնել գործնական աշխատանքային ուսուցման կազմակերպման բարելավման վերաբերյալ առաջարկներ,

2.1.3. Գործընկեր կազմակերպության հետ համաձայնեցմամբ կազմակերպելու ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների և Գործընկեր կազմակերպության պատասխանատու անձնակազմի տեղեկատվական, ծանոթացման փոխադարձ այցեր և վերապատրաստումներ՝

միտված կրթական ծրագրերի զարգացմանը և դասավանդման որակի բարձրացմանն ու արդիականացմանը,

2.1.4. Գործընկեր կազմակերպության հետ քննարկելու և առաջարկելու իրականացվող կրթական ծրագրերի որակավորումներին և զբաղմունքին համապատասխան համագործակցային նոր ձևաչափեր՝ միտված մասնագիտական կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը:

2.2. **Գործընկեր Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. Հսկողություն իրականացնել Ուսանողի կողմից Գործընկեր Կազմակերպության ներքին իրավական ակտերի, ներառյալ՝ ներքին կարգապահական կանոնների, անվտանգության կանոնների և հրահանգների պահպանման նկատմամբ, ինչպես նաև դրանց խախտման դեպքում Ուսանողին ենթարկել կարգապահական պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.2.2. Մասնակցել ՄՈՒՀ-ի կողմից համապատասխան մակարդակի որակավորումն ապահովող կրթական ծրագրի ուսումնամեթոդական փաթեթի (ուսումնական մոդուլներ, ուսումնական պլաններ, ծրագրի իրականացման ձևը) մշակմանը, ինչպես նաև ներկայացնել դրանց արդիականացման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ առաջարկություններ,

2.2.3. ՄՈՒՀ-ի հետ քննարկելով ձևավորել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստման պատվեր և օժանդակել համապատասխան կրթական ծրագրերի կազմակերպմանը (ֆորմալ և ոչ ֆորմալ):

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **ՄՈՒՀ-ը սույն Պայմանագրի շրջանակում պարտավոր է՝**

3.1.1. Մշակել գործնական աշխատանքային ուսուցման ծրագիրը՝ ուսումնասիրելով աշխատաշուկայում մասնագետների պահանջարկը, Գործընկեր Կազմակերպության գործառույթներն ու կարիքները և դրանք համադրելով ուսումնառվող կրթական ծրագրի հետ,

3.1.2. Համաձայնեցնել գործնական աշխատանքային ուսուցման ծրագիրը Գործընկեր Կազմակերպության հետ և վերջինիս առաջարկների հիման վրա ըստ անհրաժեշտության լրամշակել այն,

3.1.3. Գործընկեր Կազմակերպության հետ համաձայնեցմամբ որոշել գործնական աշխատանքային ուսուցման ժամկետները՝ մինչև ուսումնական տարվա սկիզբը,

3.1.4. Ուսումնական տարվա (կիսամյակի) սկզբին նախորդող առնվազն 5 աշխատանքային օր առաջ Գործընկեր կազմակերպությանը տրամադրել համապատասխան ուսումնական տարվա (կիսամյակի) համար սույն Պայմանագրի 1.2 կետով սահմանված ուսանողների ցանկը,

3.1.5. Պահպանել սույն Պայմանագրի շրջանակներում կամ դրանից բխող կամ դրա հետ կապված գործընթացներում ՄՈՒՀ-ին հայտնի դարձած կամ տրամադրված անձնական տվյալների գաղտնիությունը և պատշաճ պահպանությունը՝ օրենսդրությամբ սահմանված

կարգով, ձեռնպահ մնալ նշված տեղեկատվությունը երրորդ անձանց տրամադրելուց՝ բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ տեղեկատվության բացահայտումը թույլատրված կամ պարտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.1.6. Նշանակել գործնական աշխատանքային ուսուցման պատասխանատու ՄՈՒՀ-ի կողմից, որն ապահովում է Գործընկեր Կազմակերպության հետ կապը և գործնական աշխատանքային ուսուցման ընթացքի վերահսկողությունը,

3.1.7. Ուսանողների համար իրականացնել մասնագիտական կողմնորոշում, կազմակերպել տեղեկատվական և ճանաչողական հանդիպումներ Գործընկեր Կազմակերպությունում՝ ուսանողների մոտ առաջացնելով հետագա գործնական ուսուցման և աշխատանքի մոտիվացիա,

3.1.8. Ուսանողներին նախապատրաստել գործնական աշխատանքային ուսուցմանը՝ տրամադրելով Գործընկեր Կազմակերպության և գործնական աշխատանքային ուսուցման գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և ցուցումներ,

3.1.9. Գործընկեր Կազմակերպությանը նախապատրաստել գործնական աշխատանքային ուսուցմանը՝ տրամադրելով ծրագրի իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն և մեթոդական խորհրդատվություն,

3.1.10. Գործընկեր Կազմակերպության հետ միասին սահմանել գործնական ուսուցման ընթացքում Ուսանողի կողմից վարվող օրագրի ձևը և լրացման կարգը,

3.1.11. Կազմակերպել գործնական աշխատանքային ուսուցում անցնող Ուսանողի առաջին անգամ այցը Գործընկեր Կազմակերպություն՝ ապահովելով անհրաժեշտ ուղեկցում,

3.1.12. Գործընկեր Կազմակերպության հետ համաձայնեցված ժամանակացույցով, սակայն ոչ պակաս, քան կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ այցելել Գործընկեր կազմակերպություն՝ վերահսկելու գործնական աշխատանքային ուսուցման ընթացքը և դրա համապատասխանությունը ուսումնառության վերջնարդյունքներին,

3.1.13. Գործընկեր կազմակերպության հետ համատեղ իրականացնել գործնական աշխատանքային ուսուցման ընթացքի և կրթական կարիքների գնահատում (մոնիտորինգ)՝ միտված կրթական ծրագրերի բարելավմանը և համապատասխանեցման աշխատաշուկայի պահանջներին,

3.1.14. Քննարկել գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի, ինչպես նաև ուսանողների գիտելիքների և կարողունակությունների բարելավման վերաբերյալ Գործընկեր Կազմակերպության ընթացիկ առաջարկները,

3.1.15. Հաշվի առնել գործնական աշխատանքային ուսուցման արդյունքները ուսանողի ուսումնառության վերջնարդյունքների գնահատման ժամանակ,

3.1.16. Պահպանել սույն Պայմանագրով նախատեսված համագործակցության շրջանակում իրեն կամ իր աշխատակիցներին հայտնի դարձած առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները՝ բացառելով երրորդ անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն հայտնի դառնալը, ինչպես նաև իրեն կամ իր աշխատակիցներին հայտնի դարձած գաղտնիք հանդիսացող տեղեկություններն օգտագործել միայն Կողմերի միջև պայմանագրերի կատարման նպատակով: Սույն կետով սահմանված

պարտավորություններից բացառություն են հանդիսանում այն դեպքերը, երբ տեղեկատվության բացահայտումը թույլատրված կամ պարտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. **Գործընկեր Կազմակերպությունը սույն Պայմանագրի շրջանակում պարտավոր է՝**

3.2.1. Կազմել գործնական աշխատանքային ուսուցման ժամանակացույցը (գրաֆիկը)՝ գործնական ուսուցման ծրագրին համապատասխան,

3.2.2. Ապահովել գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ,

3.2.3. Գործնական աշխատանքային ուսուցման կազմակերպման նպատակով նշանակել Գործընկեր Կազմակերպությունում պատասխանատու անձ (մասնագիտական ուսուցման հրահանգիչ), ով ունի գործնական աշխատանքային ուսուցման ծրագրով նախատեսված գործառույթների ոլորտում անհրաժեշտ փորձառություն,

3.2.4. Ապահովել, որ Ուսանողին տրվեն միայն այնպիսի հանձնարարություններ, որոնք ծառայում են վերջինիս գործնական աշխատանքային ուսուցման նպատակներին և ուսումնական ծրագրին,

3.2.5. Ուսանողին ներգրավել միայն առողջության համար անվնաս և անվտանգ աշխատանքներում, որոնք համապատասխանում են նրա տարիքին և հասունության մակարդակին (եթե Ուսանողին տրված հանձնարարությունը ենթադրում է ֆիզիկական ուժի գործադրում՝ վերջինիս ֆիզիկական ուժին)՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

3.2.6. ՀՀ օրենսդրությամբ և Գործընկեր Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ապահովել Ուսանողի առողջության, անվտանգության և բարոյական-ության պահպանման համապատասխան պայմաններ և անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նախապես տրամադրել անվտանգ աշխատանքային գործունեու-թյան վերաբերյալ տեղեկություններ, անցկացնել համապատասխան ուսուցում և հրահան-գավորում,

3.2.7. ՄՈՒՀ-ի հետ միասին սահմանել գործնական աշխատանքային ուսուցման ընթացքում ուսանողի կողմից վարվող օրագրի կառուցվածքը և լրացման գործընթացը,

3.2.8. Ըստ հնարավորության նպաստել ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող կրթական ծրագրերի ճանաչելիության բարձրացմանը,

3.2.9. ՄՈՒՀ-ին տրամադրել տեղեկատվություն՝ Ուսանողի գործնական ուսուցման ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված կարգով ապահովել Ուսանողների գործնական աշխատանքային ուսուցման ընթացքի վերահսկողությունը ՄՈՒՀ-ի կողմից,

3.2.10. Պահպանել համագործակցության շրջանակում իրեն հայտնի դարձած առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, ապահովել այդ տեղեկատվության պաշտպա-նությունը՝ բացառելով դրանց՝ երրորդ անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն հայտնի դառնալը, ինչպես նաև իրեն հայտնի դարձած գաղտնիք հանդիսացող

էջ 4 ընդհանուր 6 էջից

տեղեկություններն օգտագործել միայն Կողմերի միջև պայմանագրերի կատարման նպատակով:

3.2.11. Գործընկեր կազմակերպության լուծարման գործընթաց սկսելու մասին որոշում կայացնելու դեպքում (հնարավորության դեպքում՝ մինչև նման որոշման կայացումը) ծանուցել ՄՈՒՀ-ին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է առանց ժամկետի սահմանափակման:

4.2. Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի մյուս ծանուցելով լուծել սույն Պայմանագիրը: Սույն կետով սահմանված դեպքում Պայմանագիրը համարում է լուծված համապատասխան ուսումնական տարվա վերջին օրը: Սույն կետով սահմանված ծանուցումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան համապատասխան ուսումնական տարվա ավարտից մեկ ամիս առաջ:

4.3. Պայմանագրում լրացումներ և փոփոխությունները կատարվում են գրավոր՝ Կողմեր փոխադարձ համաձայնությամբ:

4.4. Պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել Կողմեր փոխադարձ համաձայնությամբ:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	**«Էյթի Էյթ» ՍՊԸ**
	ԿԵՌ-033-10-88-55
Ք. Հրազդան, Կենտրոն 96	քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի 34/1
Տնօրենի ժ/պ Ք. Հակոբյան	Տնօրեն Հ. Գիլոյան
ստորագրություն	ստորագրություն
Կ. S.	Կ. S.